

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

1391. — Կաֆացի Կոմս Ղալաթիոյ մէջ
Եկեղեցւոյ տեղը հողը կը գնէ եւ կը շինէ Ս. Լուսաւորիչ Եկեղեցին, Առջին շէնքն է:

Գարբին Աւետ կը շինէ Ս. Խաչ մատուռը:

1436. — Կաֆացի վաճառականներ
Երէւան անգամ կը շինեն Ս. Լուսաւորիչը:

1635—36. — † Կեսարացի Գրիգոր
Պատրիարք, կը թաղուի «առ որմով» Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ:

1678. — Ծնունդ Կոլոտի:

1700. — Սեբաստացի Մխիթար վարդ.
(ծն. 1676 Փետր. 17) Պոլիս կու գայ եւ իբր
քարոզիչ կը բնակի «ի դարպաս Եկեղեցւոյ Ս.
Լուսաւորիչն Ղալաթիա» (Չամչեան):

1702. — Յուլիս 10 Կ. Պոլսոյ Աւետիք
պատրիարքը՝ իր կողմէն Կարապետ անուն մէկը
նշուր կը զըկէ Երուսաղէմ, Մինաս պատրիարքի
հաշիւները քննելու: Մինաս Պոլիս կու գայ եւ
այսպէս Երուսաղէմի պատրիարքութիւնը կը միանայ
Պոլսոյ պատրիարքութեան հետ:

1705. — Մարտ 24. Հր. † Վարդան
Բաղիշեցի վարդապետի:

1706. — Կոլոտ եւ Հիրվանցի Գրիգոր
վրդ. (Հղթայակիր) կը թողուն Ամրատու «հա-
մալսարան»ը. ուխտ թաթլոյ եւ վարոսի վանքը,
Հոռոմոսի վանքը, Ս. Յովհաննու վանքը:

1706. — Մուտք Մշու Ս. Կարապետ
վանքը:

1706. — Ս. Կարապետի եւ Ս. Ստեփանոսի
սագերը կը նորոգուին:

1706. — Սարգիս վարդապետ Կոլոտի
ընկերներէն, «այր խոհեմ յոյժ, քաղցրաքարոզ,